

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2022թ. փետրվարի 21-23-ը Բելառուսի Հանրապետություն (ք. Մինսկ) կատարած գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Ռաֆայել Գևորգյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ Էկոնոմիկայի նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

2022թ. փետրվարի 21-23-ը Բելառուսի Հանրապետություն՝ ք. Մինսկ

4. Հրավիրող կողմը՝

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Կոլեգիայի անդամ, արդյունաբերության և ագրոարդյունաբերության համալիրի հարցերով նախարար Ա. Քամալյանի հրավեր:

5. Գործուղման նպատակը՝

Մասնակցություն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի՝ միկրոէլեկտրոնիկայի արդյունաբերության և չիպերի արտադրության զարգացմանն ուղղված հարցերի քննարկման նպատակով ս.թ. փետրվարի 21-22-ը Բելառուսի Հանրապետությունում՝ ք. Մինսկում կայացած աշխատանքային կլոր-սեղանին:

6. Քննարկված թեմաները՝

Քննարկել են Եվրասիական տնտեսական միության շրջանակներում ռադիոէլեկտրոնիկայի բնագավառում համագործակցության հեռանկարները, մասնավորապես՝ միկրոչիպերի և համակարգչային տարրերի նախագծման և արտադրման բնագավառում համատեղ կոոպերացիոն ծրագրերի իրականացման հնարավորությունները:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Միջոցառումը նախագահում էին Բելառուսի Հանրապետության արդյունաբերության նախարար Պյոտր Պարխոմչիկը և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի անդամ, արդյունաբերության և ագրոարդյունաբերության գծով նախարար Արտակ Քամայանը:

Կլոր-սեղանին մասնակցել են նաև ԵԱՏՄ միկրոէլեկտրոնիկայի ոլորտի շուրջ 50 խոշոր մշակող և արտադրող ընկերությունների ներկայացուցիչներ:

Ռ. Գևորգյանը իր ելույթում նշել է, որ ՀՀ կառավարությունը նորարարական բարձր տեխնոլոգիաների վրա հիմնված տնտեսության զարգացումը հռչակել է որպես առաջնահերթ ուղղություն: Նա հավելել է, որ Հայաստանում զգալի զարգացում և առաջընթաց են ապրել տեղեկատվական ու հեռահաղորդակցային տեխնոլոգիաները:

Ըստ էկոնոմիկայի փոխնախարարի՝ առկա ներուժի մասին է վկայում հայտնի մի շարք կորպորացիաների (Synopsys, IBM, Mentor Graphics և այլն) գիտահետազոտական գործունեությունը Հայաստանում:

Միջոցառման շրջանակներում Ռաֆայել Գևորգյանը ճանաչողական շրջայց է կատարել միկրոէլեկտրոնիկայի ոլորտում կիրառվող տեխնոլոգիական լուծումների համար մասնագիտացված սարքավորումների մշակմամբ և թողարկմամբ զբաղվող «Պլանար» ԲԲԸ, իսկ փետրվարի 22-ին այցելել է բազմապրոֆիլ նշանակության էլեկտրոնային սարքավորումների, ինտեգրալային միկրոսխեմաների արտադրության գործում մասնագիտացած «Ինտեգրալ» ընկերություն, նաև «Մինսկի ռադիոնյութերի գիտահետազոտական ինստիտուտ» ԲԲԸ, որտեղ ծանոթացել է ձեռնարկություններում արտադրական գործընթացի կազմակերպմանն ու տեխնոլոգիական կարողություններին, թողարկվող արտադրանքի տեսականուն:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Հանդիպման արդյունքում ուսումնասիրվել են ոլորտում ներդրումային ծրագրեր իրականացնելու հայկական ընկերությունների ներուժի օգտագործման հնարավորությունները, որի արդյունքում վերջիններս կարող են ներգրավել համապատասխան ներդրումներ:

9. Ստորագրությունը, ամսաթիվը՝

Ռ. Քամայան
28/2/22